## Խանջյան համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2013 թվականի տարեկան գործունեության վերաբերյալ

«23»Հունվար 2014թ. Գ.Խանջյան

Հարգելի Խանջյան համայնքի բնակիչներ,այսօրվա ժողովում ես Ձեզ կներկայացնեմ 2013 թվականի երկրորդ կիսամյակի կատարված աշխատանքների, բյուջեի կատարողականի,առկա հիմնախնդիրների մասին, վերջում ակնկալում եմ, որ կծավալվի ակտիվ քննարկում, մտքերի փոխանակում, հարց ու պատասխաններ, առաջարկություններ: Գյուղատնտեսության համար աշնան բարենպաստ եղանակը ազդեց բնակչության սպասվելիք եկամուտների վրա,որը անդրադարձավ բյուջեի եկամուտների հավաքագրման բավարար աշխատանքների գործընթացին: Մենք ապահովել ենք 2013 թվականի բյուջեյում նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման բարձր տոկոսը:

Խանջյան համայնքի 2013 թվականի գյուղապետարանի բյուջեն մուտքային և ծախսային մասով կազմում է առ 31.12.2013թ. 33.705.4 հազար դրամ:
Առկա բյուջեով նախատեսված էր լուծել Խանջյան համայնքում ծառացած հիմնախնդիրները:Արմավիրի մարզի Խանջյան գյուղապետարանի բյուջեն մուտքային և ծախսային մասով ունի հետևյալ տեսքը

մուտքային մաս

| | նախատեսված | կատարված | տոկոս |
|---|---|---|---|
| 1. հողի հարկ | 7662.1 հ.դ. | 7658.6 | 99.95% |
| 2. գույքահարկ | 2000.0 հ.դ. | 298.8 հ.դ. | 104.94% |
| 3. տեղական տուրքեր | 152.0հ.դ. | 62.8 հ.դ. | 41.32% |
| 4. ոչ հարկային եկամուտներ | | | |
| ա) հողի վարձավճար | 350.0 հ.դ. | 386.9 հ.դ. | 101.54% |
| 5. դոտացիա | 20.644.9 հ.դ. | 20.644.9 հ.դ. | 100% |
| 6. տարեվերջին ազատ մնաց. | 1.609.1 հ.դ. | | |
| ա) ֆոնդային բյուջե | 2750.0 հ.դ. | | |
| 7. Գույք. վարձակալությունից | 720.0 հ.դ. | | |
| 8. Սուբվենցիա պետ.բյուջեից | 567.3 հ.դ. | | |

Բյուջեյի եկամուտների բարձր տոկոսը պայմանավորված է բերքի լավ յուրացումից:

| ծախսային մաս | վարչական | ֆոնդային մաս |
|---|---|---|
| 1.տեղական ինքնակառավարում | 21417.2 հ.դ. | 1219.3 հ.դ. |
| 2.գրադարան | 681.2 հ.դ. | 30.000 հ.դ. |
| 3.կուլտուրայի տուն | 1395.5 հ.դ | |
| 4.կրթություն | 681.2 հ.դ. | |
| 5.այլ մշակութային կազմակերպություն | 500.0 հ.դ. | |
| 6.շրջակա միջավայրի պաշտպանություն | 750.0 հ.դ | |
| 7.սոցիալական պաշտպանություն | 1700.0 հ.դ. | |

8Ջրամատակարարում (շենք-շինությունների վերանորոգում) 500.000հ.դ.
9.Սպորտային միջոցառումների կազմակերպում 500.0 հ.դ.
10.Ճանապարհների վերանորոգում 1500.0 հ.դ.
11.Նվիրատվություններ շահույթ չհետապն. կազմ.: 200.0հ.դ.

## Խանջյան համայնքում կազմակերպվել է մի շարք միջոցառումներ՝

1.Կատարվել է փողոցների և գերեզմանատան միջավայրի սան.մաքրում, ինչպես նաև սավաղատար առուների մաքրում:
2.Դաշտամիջյան և գյուղի փողոցների մասնակի վերանորոգման աշխատանքներ:
3.Գյուղապետարանը համալրվել է նոր համակարգչային տեխնիկաներով:
4.Կազմակերպվել է սպորտային և երիտասարդական ,իջոցառումներ:
5.Կազմակերպվել է ամանորյա միջոցառումներ:

Ռազմավարական կտրվացքով Խանջյան համայնքի սոցիալ տնտեսական վիճակը բարելավելու համար ընտրվել է հետևյալ ուղվածությունները՝

1.Բուժ կետի շենքային պայմաների բարելավում:
2.Մանկապարտեզի շենքի վերանորոգում:
3.Գյուղամիջյան ճանապարհների բարեկարգում:
4.Ոռոգման ցանցի վերանորոգում:

Սակայն համայնքում առկա են դեռ լուծում պահանջող հիմանախնդիրներ:

Համայնքի ղեկավար՝ Ս.Ավագյան